# Եվրոպական Միության ներքին շուկան: Չորս ազատությունները

Նորայր Դանիելյան

# Ինչպես այն սկսվեց: Ընդհանուր շուկան որպես Եվրոպական Միության պատմության մեջ հիմնական ձեռքբերումներց մեկը

- Եվրոպական Միության 6 հիմնադիր անդամ պետությունները ունեին քաղաքական, ինչպես նաև տնտեսական շարժառիթներ, երբ նրանք սկսեցին վերացնել առևտրային արգելքները իրենց միջև՝ առաջինը ածխի և պողպատի համար 1950-ական թվականներին և այնուհետև էլ ավելի լայն 1958թ.-ին, երբ ստեղծեցին Եվրոպական Տնտեսական Համայնքը:
- Նրանց շարժառիթն այն էր, որ ցանկանում էին միավորել իրենց արդյունաբերական և տնտեսական ռեսուրսները, որպեսզի միմյանց միջև ծագած նախորդ արյունահեղ պատերազմները, որոնց գագաթնակետը Երկրորդ համաշխարհային պատերազմն էր, դառնային անցյալ:

# Ընդհանուր շուկայի տրամաբանությունը

- Ընդհանուր շուկայի գաղափարը ինքնին պարզ է՝ Եվրոպական Միությանը վերաբերվել ինչպես մեկ ընդհանուր տարածք, որտեղ մարդը, ապրանքները, ծառայությունը և կապիտալը ազատ փոխազդեցության մեջ են գտնվում մրցակցությունը և առևտուրը խրախուսելու, ինչպես նաև արդյունավետությունը բարձրացնելու համար:
- *Ապրանքների և ծառայությունների ընտրության լայն հնարավորությունը կբարձրացնի որակը և կկրճատի գները: Այն բարեկեցության հիմնական միջոցն է:*

# Չորս ազատությունները

- Անձանց ազատ տեղաշարժ
- Ապրանքների ազատ տեղաշարժ
- Ծառայություններ մատուցման ազատություն
- Կապիտալի ազատ տեղաշարժ

# Անձանց ազատ տեղաշարժ

- Ազատ տեղաշարժի իրավունքը նշանակում է, որ ԵՄ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ազատ ճամփորդելու Եվրոպական Միության անդամ պետություններով և ԵՄ-ում բնակվել ամենուր:

# Ապրանքների ազատ տեղաշարժ

- Ապրանքների փոխադարձ ճանաչման սկզբունքը:
- Տեխնիկական արգելքները, որոնք սահմանափակում են ապրանքների ազատ տեղաշարժը
- Անդամ պետությունները կարող են սահմանափակել ապրանքների ազատ տեղաշարժը միայն բացառիկ դեպքերում, օրինակ, երբ առկա է հասարակության առողջությանը սպառնացող վտանգի ռիսկ, կամ սպառողին պաշտպանելու դեպքում:

# Ծառայությունների մատուցման ազատություն

*Այն երաշխավորում է ԵՄ ընկերությունների /ֆիրմաների/ այլ Անդամ պետությունում ազատությունը և իր հիմնադրման վայրից տարբեր ԵՄ անդամ, պետության տարածքում ծառայությունների մատուցման ազատությունը:*

- Մատուցվող ծառայությունների գների տարբերությունը Անդամ պետություններում:
- Անդամ պետությունների սոցիալական համակարգերում առկա տարբերությունները:
- Ընկերությունների և քաղաքացիների հանդեպ միանման վերաբերմունքի սկզբունքը:

# Կապիտալի ազատ տեղաշարժ

- Այն հնարավորություն է տալիս ավելի լավ տեղաբաշխել ռեսուրսները ԵՄ-ում, թեթևացնում է առևտուրը սահմանների վրայով, նպաստում աշխատողների շարժունակությանը և ավելի հեշտացնում է ձեռնարկությունների համար հայթայթելու անհրաժեշտ գումար բիզնես սկսելու և զարգացնելու համար:

# Աշխատուժի ազատ տեղաշարժ

- ԵՄ-ն ապահովում է, որ, երբ մարդիկ աշխատանքի են մեկնում մեկ այլ Անդամ պետություն, պահպանեն իրենց աշխատանքային իրավունքները, ներառյալ սոցիալական ապահովագրությունը և թոշակի իրավունքները, անկախ այն հանգամանքից, թե իրենց գործատուի կողմից են աշխատանքի նշանակվել այլ երկրում, կամ իրենք են որոշում կայացրել տեղափոխվել այլ երկիր:
- Մշակութային տարբերությունների և լեզվական արգելքների խնդիրը:

Աշխատուժի ազատ տեղաշարժը և ԵՄ նոր անդամ պետությունները: